

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
1. Կարգավորվող ոլորտների հիմնախնդիրներ.	3
2. Իրավական բարեփոխումներ	4
3. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ	5
4. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ	8
5. Հեռահաղորդակցության (այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի) բնագավառ . .	10
6. Արտաքին կապեր	11
7. Համագործակցություն	12

Նախաբան

Սույն ծրագիրն ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախորդ տարիների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը:

Ծրագրի մշակման համար իրավական հիմք են հանդիսացել «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները և իրավական այլ ակտեր:

Ծրագրի նպատակն է 2015 թվականի ընթացքում շարունակել և զարգացնել պետական քաղաքականության մաս հանդիսացող կարգավորման գործառույթը, որը կոչված է պաշտպանելու և հավասարակշռելու կարգավորվողների և սպառողների շահերը, նպաստելու երկրի տնտեսության զարգացման գործընթացին, ապահովելու բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր և այլն:

Ծրագրի նպատակներից ելնելով՝ ներկայացվել են կարգավորվող ոլորտում առկա հիմնախնդիրները, սահմանվել են կարգավորման միջոցառումները, այդ թվում նաև Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Հանձնաժողովի կառավարման համակարգի կատարելագործման, կադրերի որակավորման բարձրացման հարցերին առնչվող միջոցառումները, դրանց իրականացման մեխանիզմները:

Ծրագրի ուղղություններում ներառվել են նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ համագործակցության համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով ամրագրված ուղղությունները:

1. Կարգավորվող ոլորտների հիմնախնդիրներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, իրականացնելով էներգետիկայի, հեռահաղորդակցության, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների սահմանման և վերանայման մասով) բնագավառների և ջրային

համակարգի կարգավորումը, նպատակ ունի իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռելու սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծելու գործունեության միատեսակ պայմաններ, նպաստելու մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, կարգավորվող դաշտի թափանցիկության ապահովմանն ու խթանելու ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

2. Իրավական բարեփոխումներ

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է կարգավորվող ոլորտների իրավական դաշտի շարունակական կատարելագործումը՝ էլնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Այս համատեքստում 2015 թվականին շարունակվելու են իրավական բարեփոխումներին ուղղված միջոցառումները, մասնավորապես՝

- էներգետիկայի բնագավառում սպառողների սպասարկման որակի բարելավման և մատակարար-սպառող հարաբերություններում ծագած տարաձայնությունների կարգավորման նպատակով՝ էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում կատարվելու են մի շարք փոփոխություններ: Ամբողջությամբ վերանայվելու են մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող դրույթները, խստացվելու է մատակարարի պատասխանատվությունը, սահմանվելու են հաշվառքի սարքերի խափանման դեպքերում ծախսված էլեկտրական էներգիայի կամ բնական գազի քանակի վերահաշվարկի հատուկ մեխանիզմներ և պատժամիջոցներ: Միաժամանակ լրամշակվելու են էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման մատակարար-սպառող պայմանագրերի օրինակելի ձևերը և այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի և նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցի միացման վճարների հաշվարկման մեթոդիկաները, որոնք հնարավորություն կընձեռեն սպառողներին բարձրացնել նշված նպատակով մատուցվող ծառայությունների որակը և կրճատել էլեկտրամատակարարման ընդհատումների քանակն ու տևողությունը:

Կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի բարելավման կարգավորման նպատակով վերանայվելու են

«Զրմուղ-Կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները:

Օրենսդրական բարեփոխումների առումով Հանձնաժողովը 2015 թվականին նախատեսում է աշխատանքներ՝ «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների մշակման, ինչպես նաև «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» ԼՂՀ օրենքի՝ «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքների դրույթներին համապատասխանեցման ուղղությամբ:

3. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ

2015 թվականին հանրային ծառայությունների կարգավորման բնագավառում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական գործառույթները.

Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

2015 թվականին լրամշակվելու են էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկաները և միաժամանակ լրացումներ և փոփոխություններ են կատարվելու էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգում:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագնի սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Լրամշակվելու են լիցենզավորված ընկերությունների կողմից Հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը՝ տեղեկատվությունների քանակը կրճատելու նպատակով:

Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության վերահսկում

Լիցենզավորումը կարգավորման այն հիմնական գործառույթն է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության վերահսկման միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ:

2015 թվականին նախատեսվում է լիցենզիաներ և թույլտվությունների տրամադրել կարգավորվող բնագավառներում հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Իրավաբանական անձ	Գործունեության տեսակը	Ծանուցում
Էներգետիկա			
1.	«Մեգատրոն» ՓԲԸ	կառուցում	«Եղեգնուտ» ՓՀԷԿ. կունենա 2.6 Մվտ հզորություն և կարտադրի տարեկան 10 մլն. Կվտ/ժ էլեկտրաէներգիա
2.	«ԱրցախՀԷԿ» ԲԲԸ	արտադրություն	«Թրղի 3» ՓՀԷԿ. կունենա 5 Մվտ հզորություն և կարտադրի տարեկան 16.31 մլն. Կվտ/ժ էլեկտրաէներգիա
3.	«Իմաստ» ՍՊԸ	արտադրություն	«ՀԱԿ» ՓՀԷԿ, կունենա 1.864 Մվտ հզորություն և կարտադրի տարեկան 14.28 մլն. Կվտ/ժամ էլեկտրաէներգիա
Ջրային համակարգ			
1.	«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ջրային համակարգի օգտագործում	նոր շրջանների ներառում
2.	«Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ	խմելու և ոռոգման ջրային համակարգի օգտագործում	

Հանձնաժողովը կարգավորվող ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային կարգով տեղում իրականացվող մոնիթորինգների միջոցով մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերլուծություն

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը Հանձնաժողովի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկելու ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ենթակառուցվածքների վերակառուցմանը:

Հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և հետևաբար անմիջական ազդեցություն ունեն սակագների վրա, Հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով 2015 թվականի ընթացքում շարունակելու է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը:

Շարունակվելու են նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկման աշխատանքները:

Հանձնաժողովի հաստատմանն են ներկայացվելու սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ, և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն կտա ուսումնասիրելու առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարումը:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին:

2015 թվականի վերջում ԼՂՀ-ում կգործեն 10 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց գումարային հզորությունը կկազմի շուրջ 33.5 ՄՎտ, որոնք տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 150.9 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Բարենպաստ պայմաններ

ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, միաժամանակ կվերահսկվի դրանց կառուցման ընթացքը, լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

4. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մրցակցային քաղաքականության վարումը վերջին տարիներին երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմնական ուղղություններից է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է սոցիալ-տնտեսական զարգացման փուլում, առկա են երկրի տնտեսական զարգացման կայուն միտումներ, որոնք պայմանավորված են ինչպես մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի և մրցակցային միջավայրի ձևավորմամբ:

Հաշվի առնելով նախորդ տարիների աշխատանքային փորձը՝ Հանձնաժողովը 2015 թվականին նպատակաուղղված է կատարել իր առջև դրված խնդիրները հետևյալ գերակա ուղղություններով՝

Անբարեխիղճ մրցակցություն. Նախատեսվում են մի շարք աշխատանքներ ուղղված շաբաթական դիտանցումների, տնտեսավարող սուբյեկտների և սպառողների կողմից դիմում բողոքների ընթացքավորմանը, ինչպես նաև գովազդների վերահսկողությանը: Տնտեսավարող սուբյեկտների կան նրանց գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, վարկաբեկման, հասարակության մոլորեցման, այլ տնտեսավարող սուբյեկտների համբավի, վարկարժեքի վնասման և նման անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացառման նպատակով շարունակվելու են տարվող աշխատանքները, ուշադրություն է դարձվելու նաև տարբեր լրատվական թերթերի ու կայքերի հրապարակումներին: 2015 թվականի ընթացքում նախատեսվում է դիտանցումների ժամանակ ուշադրություն դարձնել ապրանքատեսակի վրա արտադրության ժամկետի բացակայության կամ գնապիտակի միջոցով մակնշման, հագուստի իրացմամբ զբաղվող սուբյեկտներին պատկանող խանութների դիմային մասերում արտապատկերված զեղչերի չհամապատասխանման, ինչպես նաև գովազդի միջոցով մոլորեցման հետ կապված և այլ նմանատիպ խախտումներին, որը կնպաստի բարեխիղճ բիզնես միջավայրի զարգացմանը և հասարակության մոլորեցման դեպքերի կանխմանը:

Ապրանքային շուկաների ուսումնասիրություն: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2015 թվականին Հանձնաժողովը ծրագրում է ուսումնասիրություններ իրականացնել առաջին անհրաժեշտության այն ապրանքային շուկաներում, որտեղ կենտրոնացվածության աստիճանը ցածր է և նախնական ուսումնասիրությունների

համաձայն գերիշխող դիրքի առկայությունը բացակայում է («Շաքարավազ», «Բրինձ», «Արևածաղկի ձեթ», «Ջնդկածավար» և նման ապրանքային շուկաներ): Արդյունքում հնարավորություն կստեղծվի գնհատելու նշված ապրանքային շուկաներում մրցակցության ազատականացման աստիճանը:

2015 թվականին շարունակվելու են տարբեր ապրանքային շուկաներում էական ազդեցություն ունեցող սուբյեկտների բացահայտմանն ու կենտրոնացվածության աստիճանի որոշմանն ուղղված աշխատանքներ: Հանձնաժողովը հետևողական կլինի ներկայումս հաշվառված 53 ապրանքային շուկաներում գործող 33 մենաշնորհի և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ անմիջապես արձագանքելու և համապատասխան որոշումներ ընդունելու նպատակով:

Գերիշխող կամ մենաշնորհի դիրք. Գերիշխող կամ մենաշնորհի դիրքի չարաչափումների հայտնաբերման և վերահսկման նպատակով 2015 թվականի ընթացքում վերահսկողություն կիրականացվի չհիմնավորված կամ խտրական գների կիրառման, արտադրանքի չհիմնավորված կրճատման կամ արհեստական պակասորդի ստեղծման, այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման դեպքերի բացահայտմանն ուղղությամբ: Առանձնապես չհիմնավորված գների կիրառման բնագավառում նախատեսվում է շարունակել պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաների շաբաթական դիտանցումները: Չարաչափումները և չհիմնավորված գների կիրառումը բացառելու, ապրանքային շուկաներում գնագոյացման գործընթացին հետևելու և արհեստական գնաճի դրսևորումները զսպելու նպատակով ծրագրվում են շաբաթական մոնիթորինգներ Ստեփանակերտ քաղաքի 30 խոշոր խանութներում և շրջաններում: Մրցունակության զարգացման, չհիմնավորված գների և անբարեխիղճ մրցակցության դեպքերի կանխարգելման ուղղությամբ պարբերաբար կուսումնասիրվեն անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումները, իսկ անհրաժեշտության դեպքում կհարուցվեն վարչական վարույթներ:

Հակամրցակցային համաձայնություններ, համակենտրոնացումներ. Ծրագրվող տարվա ընթացքում միջոցառումներ են իրականացվելու նաև հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման, կանխարգելման, սահմանափակմանն ու արգելմանն ուղղությամբ: Միջոցառումներ կիրականացվեն ապրանքային շուկաների ուսումնասիրության, տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտների հայտնաբերման և վերացման ուղղությամբ:

Առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների դիտանցում. Սպառողների շահերի պաշտպանության և տնտեսավարող սուբյեկտների միջև ազատ տնտեսական մրցակցության խրախուսման նպատակով Հանձնաժողովի պաշտոնական կայքում կտեղադրվեն և պարբերաբար կթարմացվեն տեղեկություններ Ստեփանակերտ քաղաքի մի շարք խանութներում գործող առաջին անհրաժեշտության մի շարք

ապրանքների մանրածախ գների վերաբերյալ: Ստեղծված տեղեկատվական բազան հնարավորություն կտա սպառողներին տեղեկանալ քաղաքում գործող առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մասին և համեմատել իրենց շրջակայքում առկա խանութներում գործող գների հետ, իսկ տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն կունենան ողջամիտ և մրցունակ գին առաջարկել:

5. Հեռահաղորդակցության (այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի) բնագավառ

Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը, իր բազմաբնույթ ուղղություններով և խնդիրներով շարունակում է մնալ Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններից: 2015 թվականին կշարունակվեն սկսված բարեփոխումներն այս բնագավառում՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով բնակչությանը մտահոգող խնդիրները, և համապատասխան աշխատանքներ կտարվեն կարգավորվող ընկերությունների հետ՝ լուծելու այդ խնդիրները:

2015 թվականի ընթացքում Հանձնաժողովը նախատեսում է՝

- էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի և փոստային կապի բնագավառների կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության իրականացում, ինչպես նաև համապատասխան հայտերի ներկայացման դեպքերում՝ սակագների սահմանում և վերանայում: Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև լիցենզիայի պայմանների վերահսկման համար:

-շարունակել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ ուշադրության կենտրոնում պահելով հեռահաղորդակցության ծառայություններից օգտվող բաժանորդների իրավունքների պաշտպանության հարցը,

-աշխատանքներ տանել պիրինգի՝ ցանցերի միջև թրաֆիքի փոխանակման ոլորտում ինտերնետ-պրովայդերների տեխնիկական փոխգործակցության ուղղությամբ: Պիրինգը թույլ կտա կրճատել ցանցերի միջև փաթեթների փոխանցման ուղիները և կօգնի խուսափել մեկ հանրապետության կամ քաղաքի տարբեր ինտերնետ-պրովայդերների միջև տեղեկատվության փոխանցման ընթացքում միջազգային և միջքաղաքային կապի ալիքների օգտագործումից,

-հանձնաժողովին հատկացված ռադիոհաճախականությունների առևտրային (կոմերցիոն) տիրույթի օգտագործման պլանավորում, համակարգում և արդյունավետ օգտագործում,

-հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման նոր լիցենզավորման մրցույթների հայտարարում և կազմակերպում` ըստ անհրաժեշտության,

-սիրողական ռադիոսպերատորների լիցենզավորում` ըստ անհրաժեշտության,

-համագործակցության դաշտի ստեղծում ՀՀ և ԼՂՀ հեռուստառադիոընկերությունների միջև:

Բացի նշված միջոցառումներից Հանձնաժողովը կշարունակի հեռահաղորդակցության, այդ թվում` հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կարգավորման գործառույթների` լիցենզավորման, օրենսդրական դաշտի կատարելագործման աշխատանքները:

6. Արտաքին կապեր

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի գործունեության ռազմավարական կարևոր բաղադրիչներից է թափանցիկ և հրապարակային գործունեության շնորհիվ հասարակության հետ արդյունավետ կապերի ամրապնդումը: Այդ գործառույթի իրականացման աշխատանքները տարվում են երկու հիմնական ուղղություններով.

- Տեղական ՁԼՄ-ների, պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն:

- Հայաստանի Հանրապետության համապատասխան Հանձնաժողովների և նրանց միջոցով նաև միջազգային կառույցների հետ համագործակցություն:

Հանձնաժողովը 2015 թվականին նախատեսում է շարունակել վերոնշյալ ուղղություններով աշխատանքները և իրականացնել հետևյալ միջոցառումները.

-Ստեղծել Հանձնաժողովի պաշտոնական էջը Twitter սոցիալական կայքում:

-Օպերատիվ արձագանքել «Թեժ գծի» միջոցով սպառողներից ստացված ահազանգերին, դիմում-բողոքներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, վերլուծել հարցումները և անհրաժեշտության դեպքում օրենքի շրջանակներում իրականացնել համապատասխան միջոցառումներ:

-Ըստ նպատակային խմբերի կազմակերպել հանդիպումներ, կլոր-սեղան ձևաչափով քննարկումներ:

-Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և տեղեկատվության մատչելիության համար ապահովել ինտերնետային կայքի հետագա արդիականացման գործընթաց:

-Համագործակցելով ՋԼՄ-ների հետ՝ կազմակերպել հարցազրույցներ, ճեպագրույցներ ուղորտների պատասխանատուների մասնակցությամբ: Պատրաստել համապատասխան բնագավառում կատարված աշխատանքների և նախատեսվող ծրագրերի մասին ամփոփ վերլուծություն ու լուսաբանել:

Ընդհանուր առմամբ 2015 թվականին կշարունակվեն Հանձնաժողովի գործունեությունը հանրության համար ավելի բաց ու թափանցիկ դարձնելու աշխատանքները:

7. Համագործակցություն

Հանձնաժողովը ծրագրային տարում նախատեսում է շարունակել ակտիվ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ:

2014 թվականին զգալի աշխատանքներ են կատարվել համագործակցության շրջանակներում, մասնավորապես ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների աջակցությամբ Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են արտերկրում կազմակերպված սեմինար դասընթացներին, ինչը նպաստել է միջազգային փորձի յուրացմանը, որը նախատեսվում է նաև 2015 թվականի աշխատանքային ծրագրերով:

Հանձնաժողովի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի միջև շաբաթական կտրվածքով տեղեկություններ են փոխանակվում առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների վերաբերյալ, համագործակցում են անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, համատեղ որոշումների ընդունման, ապրանքային շուկաներում հայտնաբերված հակամրցակցային հնարավոր դրսևորումների մասին տեղեկությունների փոխանակման ուղղությամբ: 2015 թվականին համատեղ աշխատանքներ են նախատեսվում փորձի փոխանակման, տնտեսական մրցակցության օրենսդրության խախտումների բացառման, համատեղ նիստերի, սեմինարների կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

Հանձնաժողովը շարունակելու և ընդլայնելու է համագործակցությունը պետական կառավարման մարմինների հետ: Համագործակցությունն առավել կարևորվում է հավաստի տեղեկատվության ստացման, փորձի փոխանակման և տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման վերաբերյալ հասարակության և պետական այլ

մարմինների կողմից ընկալման տեսանկյունից: Կարևորվում է Հանձնաժողովի համագործակցությունը իշխանության բոլոր թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական համակարգի կառույցների հետ: Մասնավորապես, մրցակցության համար բարենպաստ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կհամագործակցի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության, արդարադատության, արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, ինչպես նաև շահագրգիռ պետական այլ մարմինների հետ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐԱՍՅԱՆ